**ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմնի եզրակացությունը «Ազգ» օրաթերթի մարտի 11-ի համարում հրապարակված «Շեֆի» հրահանգով ՀՀՇ-ի արշավը մեկնարկեց» հոդվածի վերաբերյալ**

2009 թվականի մարտի 13-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին են դիմել «Առավոտ» եւ «168 ժամ» թերթերի գլխավոր խմբագիրներ Արամ Աբրահամյանը եւ Սաթիկ Սեյրանյանը՝ ընդդեմ «Ազգ» օրաթերթի մարտի 11-ի համարում հրապարակված «Շեֆի» հրահանգով ՀՀՇ-ի արշավը մեկնարկեց» հոդվածի: Դիմումում, մասնավորապես, ասվում է. «Հոդվածում տեղ են գտել «Առավոտ» եւ «168 ժամ» թերթերի հասցեին հերյուրանքներ, որոնք բացարձակապես սուտ են բովանդակային առումով եւ գրված են աններելիորեն գռեհիկ ոճով: Մենք գտնում ենք, որ այդ հրապարակումը կոպտորեն խախտում է մեր (այդ թվում նաեւ «Ազգ» թերթի) կողմից ընդունված Վարքականոնի մի շարք կետեր:

Սույն եզրակացությունը պարզաբանում է հիշյալ հրապարակման համապատասխանությունը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի 35 լրատվամիջոցների ստորագրած Վարքականոնին:

Քննարկելով «Ազգ» օրաթերթի  մարտի 11-ի համարում հրապարակված «Շեֆի» հրահանգով ՀՀՇ-ի արշավը մեկնարկեց» հոդվածի համապատասխանությունը ԶԼՄ-ների Վարքականոնին, Դիտորդ մարմինը արձանագրում է հետեւյալը.

«Ազգ» օրաթերթի մարտի 11-ի համարում հրապարակված «Շեֆի» հրահանգով ՀՀՇ-ի արշավը մեկնարկեց» հոդվածի՝ «Առավոտ» եւ «168 ժամ» թերթերին տրված պիտակավորումները իրական հիմք չունեն եւ խախտում են Հայաստանի ԶԼՄ-ների Վարքականոնի՝ 1.1 եւ 1.3 կետերը:

Հայաստանի ԶԼՄ-ների Վարքականոնի 1.1 կետը պահանջում է «մինչ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ»: Վարքականոնի 1.3 կետի պահանջն է՝ «վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա»: Դիտորդ մարմինը համարում է, որ «Առավոտ» եւ «168 ժամ» թերթերի՝ որեւէ կուսակցությանը պատկանելու մատնանշումը ոչ թե գնահատող դատողություն է, այլ ոչնչով չապացուցված կեղծ տեղեկատվություն, եւ հոդվածագիրը պարտավոր էր այն ճշտել: Հետեւաբար, այդ թերթերի մասով նրա մեկնաբանությունները հիմնված են ոչ ստույգ փաստերի վրա:

Այսպիսով՝ Դիտորդ մարմինը համարում է, որ «Ազգ» օրաթերթը մարտի 11-ի համարում հրապարակված «Շեֆի» հրահանգով ՀՀՇ-ի արշավը մեկնարկեց» հոդվածի՝ «Առավոտ» եւ «168 ժամ» թերթերին տրված պիտակավորումներով խախտել է Հայաստանի ԶԼՄ-ների Վարքականոնի՝ 1.1 եւ 1.3 կետերը:
Միաժամանակ, Դիտորդ մարմինը կոչ է անում «Ազգ» թերթին եւ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած այլ ԶԼՄ-ներին՝ թույլ չտալ, որ զանազան կուսակցական խմբերի միջեւ քաղաքական պայքարը վերածվի ԶԼՄ-ների միջեւ պայքարի, ու զերծ մնալ միմյանց հասցեին վարկաբեկիչ հրապարակումներից՝ առաջնորդվելով «պրոֆեսիոնալ լրագրության համընդհանուր չափանիշներով», ինչպես նշված է Վարքականոնի նախաբանում:

***Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի***
***2009 թվականի մայիսի 12-ի նիստում***

***Սույն եզրակացությունը տպագրվել է «Ազգ» օրաթերթում***
***2009 թվականի մայիսի 20-ին***